



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

17

ԳԼՈՒԽ ԸՀԴ ՎԱՍՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Իսկ որ ի պատերազմունս մափ գործին, հարքն մեր ամենեին չհամարեցան ինչ գայն ի մեղս, ըստ որում եւ մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոյս հետեւել: Բայց վասն զձեռս սրբելոյ բարիոք է այնպիսեացն երեք ամ արտաքոյ հաղորդութեան լինել: Այս եւ ոչ ընդ օրինօքն եմուտ: Եւ աստ լոկ ի հաղորդութենէ ասէ արտաքոյ: Յայսմանէ ուսցին դատաւորք, եւ մի՛ վրէժ ինչ լիցի:

ԳԼՈՒԽ ԸՀԵ ՎԱՍՆ ՈՐԴՈՅ ԲԱԺԱՆՄԱՆ

Որդիք որ ոչ հնազանդին ծնողաց իրեանց, որ ինչ եւ հասանէ յընչից իրեանց, տացեն նոցա սիրով եւ նստուցանեն զնոսա ուրոյն. գուցէ չարիք ինչ հանդիպեցին: Եւ որ կանայս առնեն՝ նոյնպէս արասցեն, զի այն է հաճոյ Աստուծոյ, քանզի Պօղոս այսպէս հրամայեաց: Թերես այն է, որ ասէ՝ հարք, սիրեցէք զորդիս ձեր, եւ այլն: Եւ զայս ընտրելով ներմամբ կամի:

ԳԼՈՒԽ ԸՀԶ ՎԱՍՆ ՆԵՐՔԻՆԵԱՑ ԵՒ ՄԱՐՄՆԱԶԵՂԾԱՑ

Եթէ որ ներքինի իցէ եւ կամ մարմնագերծ եւ կեղծաւորութեամբ կին առցէ, եւ կնոջն հասեալ ի վերայ գործոյն՝ իշխան է քակտել եւ թէ կալ. եւ թէ քակեցի, ում եւ կամի՝ լինիցի: Եւ զկէս ընչիցն առցեն յառնէն եւ տացեն տուգանս, վասն անարգանաց պսակին, յեկեղեցին, եւ երեք ամ ապաշխարեցէ այրն պիղծ:

ԳԼՈՒԽ ԾՃԷ ՎԱՍՆ ՈՐ ՈՒՏԷ Ի ՏԵՂՈՅ

Եթէ որ ուտէ ի տեղոյ, տացէ ընդ միոյն շորս, ապա թէ ոչ՝ ըստ կանոնին ապաշխարիցէ, կամ յաղքատս տալ, թէ այն պատահի: Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ:

ԳԼՈՒԽ ԾՃԸ ՎԱՍՆ ՀՐԴԵՅԻՑ

Եթէ որ հրդեհիցէ զարդար վաստակս, տուժեցի ընդ միոյն երեք, թէ ոչ՝ ապաշխարեցէ տասն ան: Տուցաւ այս եւ ըստ Օրինացն:

ԳԼՈՒԽ ԾՃԹ ՎԱՍՆ ՀԱՓՇՏԱԿՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐԱՑ

Արուեստաւորք, որ յափշտակեն զինչսն այլոց, տացեն ընդ միոյն շորս, ապա թէ ոչ՝ ապաշխարեցեն ըստ վարդապետին հրամանի: Չյայտնեալն եւ ի դատաստան անկեալն հատուցանել ասէ, եւ որք կարողն են, եւ որք չունին կար եւ զծածուկն՝ ապաշխարել:

ԳԼՈՒԽ ԾՁ ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՅՈՒՍՏԵՐՍ ԵՒ Ի ԴՍՏԵՐՍ

Եթէ որ վախճանի եւ ունիցի ուստերս եւ դասերս, զինչսն ծնողացն ընդ երկու քոյրսն մին եղբօր բաժին դիցեն հաւասարապէս: Ըստ Օրինացն յառաջագոյն գրեցաք զայս դատաստան եւ եղաք. դուստր ի տան աոցէ զեղբօր բաժին, եւ ելեալք՝ երկուսն զմին եղբօր: Եւ այս յայտնի յՕրինաց ոչ ասացաւ, եւ աստ կանոնական հրամանս զայս ոչ ընտրեն, եւ ոչ հեթանոսք զանագանեն զսոսա: Այլ եւ յիրացն հաւատարիմ զայն իսկ գիտեն, զի ելանէ դուստր ի տանէ հօր բաժնի եւ որ ի տան է՝ անբաժին եւս է: Արդ, զսոսա հաւասարաբաժին զկնի մահուան հօրն առնել ոչ է արդարադատութիւն, զի այդպէս զտանին կարգեալ դասերքն ընդ եղբարսն առեալ բաժին, եւ որք ի տանն՝ երկուսն մի: Ապա թէ որ ասիցէ՝ որդոցն ծախք լինել ածել կանայս, զիտելի է, զի որքան ծախք իցէ, այնքան աշխատութիւն, իբր զի արու է, եւ բաժին ընդ կնոջ նորա ածաւ: Ըստ այսմ հաւատարիմ երեւի, զի կարգելքն՝ երկուսն մին լիցին, եւ որք ի տան՝ ընդ որդիս համարեսն ցին: Եւ այդպէս ամենեցուն հաւասարութիւն եղիցի, եւ տկար ազգն

խնամեսցի, եւ մի՛ նուագ լիցի, զի բազում ծնողք զդատերս առաւել պատուեն. եւ այս նախախնամութեամբ, զի որդոց դիրին է սպրել, քան դատերաց: Եւ զայս յայտ արարաք, զի եւ նոյն իրքդ այդպէս պատահի, այլ կամք ընտրեսցեն դատաւորաց՝ զամենայն զդատերսն զերկուսն մին ունել եւ կամ ըստ դատմանն, որպէս գրեցաւ: Նաեւ զայս իրաւունս համարիմ, զի բազում անգամ պատահի զդուստր երկիցս կարգել. այնոցիկ բաւական լիցի այն մասն ի բաժնի, եթէ ըստ ընչից ծնողացն առ նա ծախքն լեալ իցէ, ապա թէ ոչ՝ տեսցի հաւասարութիւն, սակայն մասն լիցի բաւական առելոցն: Եւ յերկրորդ ամուսնութենէ ուստերքն եւ դատերքն նուագ լիցին ի մասն բաժնի, որպէս գրեալ է: Այլ գտուն հօր կրսեր որդոյն սովոր են տալ, բայց տեսցի անկաւորին լինել, որ գտեղի հօրն բաւական է ունել: Իսկ անդրանկանն պատիւ լիցի, որպէս ծանուցեալ է. ըստ այդմ, եթէ հաւասար բաժանեսցին ժառանգութիւնն ուստերաց, առաւել լիցի յաղագս պատուոյն:

ԳԼՈՒԽ ԾՁԱ ՎԱՍՆ ԹԷ ՔԱՆԻ ՏԱՐՈՅ ԼԻՆԻ ՏՂԱՅՆ, ՈՐ ԲԱԺԻՆ ԱՌՆՈՒ

Աստուածային օրինադրութիւնն եւ կանոնական հրամանն զնկարեալ սաղմն ի դատաստան դնէ արեան եւ այն, զի առաջի կայր ծնունդ յանվնաս լինելն: Բայց ժառանգ լինելն, թէպէտ աշակերտեալք Մահմետի սնոտի իմաստասիրելով գտեսանել աստեղաց ասեն մանկանն, այլ մեզ հաւատարիմ Տեառն լիցի ասելն՝ ոչ յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ, եւ դարձեալ՝ ծնեալն ի մարմնոյ մարմին է: Եւ մարմնոյ ծնեալն մարմնոյ ժառանգ եղիցի, որպէս յԱստուծոյ ծնեալն՝ Աստուծոյ: Ապա թէ յի է կինն, եւ պատահի մեռանել առնն, ակն կալցեն դատաւորք ծննդեանն եւ այնպէս զժառանգութիւնն հաստատեսցեն ի ծնանելն: Եւ թէ ի նմին ւուր, յորում ծնաւ, մեռանիցի՝ մանուկն, որ ժառանգ է, ի մանկանէն ժառանգիցեն այլք եւ ոչ ի հօրէն: Եւ եթէ մայր մանկանն մեռանիցի, թէ ի ծնունդն, թէ զկնի ծննդեանն եւ թէ ի նմին ւուր մեռանիցի, մանուկն ժառանգ է մօրն, եւ ի մանկանէն հայրն ժառանգէ: Ըստ ասացելոյդ ուստերք եւ դատերք ժառանգ լիցին, ապա թէ չիցեն՝ ում եւ կամի ժառանգեցուցէ՝ ազգատոհմի եթէ ծառայի, զի ինքնիշխան է զայդոսիկ ժառանգուցանել: Այլ զկնի մահուն, թէ ինքն ոչ հաստատեսց, մերձաւորքն ի տոհմէ եւ ոչ հեռաւորքն ժառանգեն, որպէս եւ դատեալ եղեւ այդ ըստ Օրինաց:

ԳԼՈՒԽ ԾՁԲ ՎԱՄՆ ՀԱՇՎԱՄԵԼՈՅ ԶԱԻԱԿԱՑ

Եթե պատահի հաշմ լինել գառակ, որպես թե չունել բնաւ միտս եւ իմացուածս, սա ոչ է ժառանգ, զի ոչինչ իմանայ, որով ի գործ արկցէ զհայրենիսն, զի ի ծնէ այնպէս պատահեաց: Ապա թե յետոյ ախտն եղեալ իցէ եւ կարծիցի բժշկիլ, յայլ ժառանգս աւանդեսցեն. թե առողջասցի՝ ժառանգէ, ապա թե ոչ՝ որք ժառանգենն խնամս տարցին մինչ ի մահ: Իսկ եթե այլազգ իցէ՝ կաղ, կամ կոյր, կամ այսահար, որ չիցէ անզգայեալ, կամ բորոտ, որ չիցէ բնաւին ապականեալ, կամ անդամաւոյծ իմաստուն եւ այլք այսպիսիք, որ բաւական գոն այլօք սպասաւորօք զհայրենիսն ժառանգել, մի՛ զրկեսցին ի ժառանգ լինելոյ, իսկ անբաւականքն՝ այլօք ժառանգորդօք խնամիցին մինչ ի մահ, որպէս ահա ցուցաւ: Եւ զայդ այդոցիկ իրաւամբք զիտենք դատաստան: Չի եւ ըստ Օրինացն անարատք ի կենդանեացն ի սեղանն ելանէին Աստուծոյ նուէր, իսկ արատաւորքն հասարակաց էին գենլի: Այսպէս, անարատք հոգով եւ մարմնով Աստուծոյ լիցին ընծայ ի մարդկանէ եւ ժառանգք, իսկ արատաւորքն մարդկան անխտտելի են ժառանգք:

ԳԼՈՒԽ ԾՁԳ ՎԱՄՆ ԿՏԱԿԱՑ, ՈՐ Է ՏԻԱԹԻԿ

Եւ կտակ լիցի՝ որպէս ուսուցանեն կանոնք. զկնի երից ատուրց հիւանդութեան կոչէ հիւանդն զքահանայն եւ զժառանգաւորս եկեղեցոյն եւ երեք վկայիւք արասցէ զկտակն եւ զամենայն ինչ զգհոգոյ, եւ զթաղմանն, եւ զտան խօսեսցի ըստ կամաց իւրոց: Եւ եթե ի նմին ատուր պատահի մեռանել, հաստատուն լիցի կտակն, թե չիցէ թափեալ ի մտաց. ոչ որպէս Մահմետի անգոյ իմաստունքն ասեն՝ յետ քառասուն ատուր ապրելոյ հիւանդին հաստատի կտակն: Բայց հաստատուն կտակ յառողջութեանն է, թէպէտ եւ ասացեալն անխտտելի է, զի կամաւոր՝ այն, իսկ այս խառն տեսանի: Եւ եթե պատահի յառնել հիւանդին եւ փոխել զկտակն, իշխան լիցի, զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյն: Այլ Աստուծոյ եղեալ կտակն հաստատուն լիցի, կատարեսցէ գոր խօսեսցաւ բերան նորա ի նեղութեանն, եւ թե ուխտս դիք եւ կատարեսցէք: Ինչ ի դէպ իցէ ընդ յառնելն կատարման կտակին՝ տեսցէ, եւ գոր ինչ զկնի մահու գրեալ է, զկնի կատարեսցին: Եւ թե փոխէ՝ յայլ առաւելն իշխան լիցի եւ ոչ ի նուագեցուցանելն: Եւ արդ, այսմ այդ է դատաստան:

ԳԼՈՒԽ ՃՁԴ ՎԱՍՆ ԹԷ ՈՐՐՊԷՍ ԱՐԺԱՆ Է ՉՄԵՌԵԼՈՅ ԽՕՍՔՆ ԸՆԴՈՒՆԵԼ

Եթե ի միասին բազում ժամանակք կեցեալ իցեն այր եւ կին եւ որդիս ծնեալ, որոց ի միասին գանազանութիւն չիցէ ստացուածոց, ի միաբանուս թենէ ընչից մեռելոցն լիցի, ապա թէ յայտնապէս կնոջն երեւի ստացուածն՝ ժառանգաւորացն լիցի: Եւ թէ ձեռնհաս իցէ՝ այրն գմեռելոյթսն արասցէ, եւ թէ ոչ իցէ՝ յիրոցն, եւ առն ի ժառանգութիւն մի՛ լիցի: Եւ թէ ամուլ կին պատահի, եւ բազմաժամանակեայ ի միասին իցեն, առն լիցի մեռելոյթսն, եւ մի՛ լիցի ի մասն ժառանգութեան առն, այլ որք կնոջն են՝ ժառանգեացեն: Իսկ սակաւաժամանակեայ եղեալ կին եւ առանց ամուսնութեան մեռեալ՝ իւրքն ժառանգեն եւ ոչ այրն: Ապա թէ որդի կամ դուստր ծնեալ, թէ կենդանի իցեն եւ թէ մեռեալ, առնն լիցի մեռելոցն եւ մասն ժառանգութեան: Եւ այդոքիկ յառաջին եւ յերկրորդ ամուսնութիւնն միեւնոյն լիցի օրինակ: Իսկ մեռեալ այր՝ յիրոցն լիցի յամենայն ասացեալսդ մեռելոցն: Եւ ծնեալ ուստերս եւ դստերս՝ ի կնոջէն ժառանգէ, եւ ի նորայոցն՝ կինն, իսկ յամլոյն ոչ ժառանգէ այրն, բայց սակաւ նշան մասին. այլ կին ամուլ ժառանգէ յառնէն յաղագս տնտեսութեանն: Եւ փութով մեռեալ այր, եւ կոյս մնացեալ կինն յառնէն չժառանգէ. եւ ծնեալ ծնունդ, թէ կենդանի իցեն, թէ մեռեալ, ժառանգէ յառնէն, թէ եւ սակաւաժամանակեայ իցեն ի միասին: Եւ հանդերձք մաշեալք ի բաժանումն ոչ յիշին երկաքանչիւր կողմանցն, բայց որ ի միջի կացցէ. նոյնպէս եւ՝ պարգեւքն ի միմեանց, թէ մաշեալք իցեն, այլ ոսկի եւ որ ինչ կայուն իցէ, այնոքիկ ըստ իրաւանց դատեալք վճարեցին: Եւ ծախք հարսանեաց ոչ յիշին, զի ի կամաց այդոքիկ լինին: Բայց որ ինչ արժան է, իրաւամբք տեսցեն դատաւորք ըստ պատահման եւ ըստ սովորութեան գաւառին, զի դատաստանս, գոր եղաք, իրաւացի կարծիք է: Ապա թէ արտաքոյ ըստ ճշմարիտ իրաւանցն կարծիքն է, յիրաւունս դարձուցանել ուղղութիւն է, միայն զի ներեսցէ մեզ սիրով եւ թողութիւն ի պակասութեանն արասցէ, կորովի տեսութեամբ գթերին լցցէ:

ԳԼՈՒԽ ՃՁԵ ՎԱՍՆ ՎԱՃԱՌԱՑ ՆԵՆԳՈՒԹԵԱՆ

Եթե որ զիր ինչ զարատաւորն տայ ընկերին ի պատճառս վաճառի եւ նենգութեամբ գրկէ եւ խաբէ սուտ երդմամբ եւ ինքն գովի յանձին իւրում վասն գրկելոյ զընկերն, նգովեալ եղիցի: Եւ զի մի՛ ի նգովս անկցին այնպիսի

վաճառողքն, գայտցիկ դիցուք զդատաստան: Չարատաւորն տալ ըստ այսմ է. թէ հարկանող իցէ, եւ կամ ի բարս կամ ի մարմինս արատ ինչ գուցէ, կամ յանշնչից իցէ վաճառն, եւ այնպիսոյն բիծն իցէ, թէ վնաս ինչ գործեալ իցէ, դատաստանաւ է վճարել վաճառողին, զի Օրէնքն ի միջոյ բառնալ եւ ոչ վաճառել հրամայէ: Ապա թէ այլագգ ինչ իցէ եւ յայտ գայցէ՝ կամ ի պարծիլ կամ վկայք իցեն, զի գիտակ էր եւ վաճառեաց, անդրէն դարձցի, եւ թէ հաճոյ իցէ գնուս դին՝ որքան արժան է ուղղեսցին: Եւ թէ չիցէ գիտակ եւ վաճառէ, եւ ապա շաւ գնողն իցէ, հանել գապաշան արժան է: Եւ ի վաճառելն զբիծն զանենայն ասասցէ, որպէս Եպիփան ի վաճառելն զէշն խեռաբարոյ, եւ գիտելով գնողին զանվնասս պատճառն՝ ըստ հաճոյից իւրոց որքան արժան է գնեսցէ. եւ այդպէս ի կանոնական նգովիցն ազատի, ապա թէ ոչ՝ ընդ գողսն եւ յափշտակողսն ապաշխարութիւն լիցի:

ԳԼՈՒԽ ԸՁՁ ՎԱՍՆ ՍՈՒՏ ՎԿԱՅԻՑ

Եթէ որ երթայ սուտ վկայ եւ ընկենու զոք յորոգայթ մահու կամ գանի, հինգ ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ մի ամ ընդ ձեռամբ՝ տրօք տնանկաց, ապա արժանի լիցի օրինաց: Դատաստան այս եղաւ ըստ Օրինաց, այլ կանոնականս այժմ երկրորդի: Յորոգայթ մահու եւ գանի ասէ, այլ որ ոչ մեռանի կամ տուգանօք ազատի, եւ այսոցիկ դատաստան լիցի՝ որքան վնասեացն հատուցէ, ըստ այնմ, թէ որպէս խորհեցաւ առնել՝ եղիցի նմա. եւ կամ թէ չիցէ բաւական՝ ըստ հրամանի կանոնացդ ապաշխարեսցէ:

ԳԼՈՒԽ ԸՁԷ ՎԱՍՆ ԿՈՒՍԱՆԻ ԵՒ ԵՐԿԱԿԻ

Իսկ որ մինն կուսան է, եւ միւսն՝ երկակ, եւ մինն վախճանի, ամուսնանալ անհնար է. եւ թէ յանդգնի որ՝ ապաշխարութիւն երեքկնոյն լիցի, եւ քահանայն լուծցի: Երկբայի այս կանոնք սրբոյն լինել Բարսղի, եւ թէ նորա՝ անհնարին է լինել այս կանոնաց: Այլ յուսմանէ ներմամբ այսպէս ծանեաք, զի կրկին ապաշխարութիւն երկուցն այնպիսեացն լիցի: Եւ քահանային պարտ է ուսուցանել զայս սահման կանոնի, զի մի՛ դատապարտեսցի յաղագս աշատելոյն: Չայդ այդոցիկ գիտասցուք լինել դատաստան:

ԳԼՈՒԽ ԾՁԸ ՎԱՍՆ ԽՕՍԵԱԼ ԿԱՆԱՆՑ

Իսկ եթե խօսեսցի կին, եւ հաստատեալ իցէ քահանային երկու կամ երեք վկայիք, մի՛ իշխեսցէ թողուլ զնա եւ այլ կին առնուլ, բայց եթե վասն պտոնկութեան կամ վասն մարմնագեղծութեան: Չի խօսեալն քահանայի եւ վկայիք կին երաշխատրեալ է, եւ վասն պտոնկութեանն իշխան լիցի, զի ոչ ի տան նորա է յանցումն, առնուլ կամ ոչ: Եւ մարմնագերծ է մարմնով ապականեալ, վերս ունի անբժշկելի, եւ յայսմ իշխան է, կարծեօք բժշկութեան, առնուլ կամ ոչ: Իսկ այլօք պատճառանօք չէ արժան թողուլ զխօսեալն:

ԳԼՈՒԽ ԾՁԹ ՎԱՍՆ ԱԽՏԱԺԷՏԱՑ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Կին կամ այր ցաւագին, կամ ախտաժէտ, կամ արուագէտ, մի իշխեսցեն ամուսնանալ եւ անարգել զպսակն օրհնութեան. եւ թէ որք յանդգնի՝ զկէս ընչիցն յեկեղեցի տացեն եւ երեք ամ ապաշխարեսցեն: Եւ զայս յաղագս ծնկելոցն յախտս ասէ, զի նախ առողջասցին, կամ հոգեւորաց՝ յաղագս այնորիկ պարապեսցին, արուագիտաց եւ անասնագիտաց՝ զի մի՛ ի պատճառս այնորիկ զապաշխարութիւնսն մոռասցին եւ զի միջոցօք ժամանակօք մաքրեսցին:

ԳԼՈՒԽ ԾՂ ՎԱՍՆ ԳՈԴԵԱՑ ԵՒ ՊԻՍԱԿԱՑ, ԽԼԻՑ ԵՒ ՀԱՄՐԻՑ, ԵՒ ԿԱՂԱՑ ԱՌՆՈՒԼ ԿԻՆ ԹԷ ՈՉ

Եւ զայսոցիկ եղից այժմ զդատաստան՝ ամուսնանալ կամ ոչ: Ի կանոնաց յաղագս շնութեան ուսաք, ուրկաց՝ եթէ ծնունդ նոցա նմանապէս ուրուկ լիցի, յաղագս այսոցիկ արգելցին, զի մի՛ ախտն տարածեսցի ի ծնունդն: Արգելցին եւ բորոտք, զի թէպէտ եւ ի բժշկաց ասի փոխիլ ախտից, յորոց հոտ է, եւ ի բորոտ ոչ լինի, զի յուրկոտս յաղագս վիրացն լինի, եւ անդ վեր ոչ է, սակայն կանոնք փոխելի զախտն ցուցին: Եւ զի մի՛ ի ծնունդս ախտն լիցի, արգելցին. ցի եւ Օրէնքն ոչ միայն յամուսնանալոյ, այլ եւ ի բանակէ եւս մերժէ: Եւ թէ որ զՕրինացն նշանակ ասէ, սակայն ըստ մարմնոյ խտրութիւն էր, որպէս եւ այժմ յաղագս ասացելոյ պատճառիդ: Իսկ կադ, թէ չիցէ բնաւին լուծեալ, զի խափանումն իցէ կամ ուսման կամ այլոց մասնատրաց, ամուսնասցի. եւ այդ՝ առնն է, նմանապէս եւ կնոջն լիցի: Իսկ կուրաց յերկոսին աչսն. կին՝ մի՛ ամուսնասցի, զի ոչ կարէ

անուցանել գմանկունսն եւ ոչ այլ ինչ սպասատրութիւն, իսկ այր՝ թէ ժուժկայ է, բարոք է, ապա թէ բաւական է զկին եւ գտուն հոգալ, թէ ընչիւք նախնեացն եւ թէ այլ իրօք, ներելի է յաղագս այլոց պատճառի եւ վտանգի: Իսկ կին խուլ, թէ ուշիւ իցէ, եւ որ հաւանեացի առնուլ, եղիցի. նոյնպէս եւ՝ այր: Իսկ համրն, թէ այր է, թէ կին, ընդ անասունս համարեալ է. մի՛ ամուսնացի: Չայդոսիկ զդատումն ես ճշմարիտ կարծեմ: Եւ թէ այլ որ, ուղիղ ունելով զտեսութիւն, պարսաւանս այսմ դիցէ, անխռով եմ խորհրդով, զի եւ ոչ միոյ դատաստանի վճիռ հատանի լինել եւ կամ կանոնական հրամանաց, որ յայտոսիկ ածի դատաստան, գնոյն դատաստանի ունելով զօրութիւն, այլ ընդ մերոյն ընտրութեան եւ զկանոնացն երկրորդեցի: Չի թէ ընդդէմ մերն կարծիցի՝ զսրբոցն պատուեալ զբան ի նոյն, ի նոցունց թողութիւն ինձ խնդրեսջիք, զի ոչ այնքան յանդուզն եմ, թէ զոր ոչ ըստ ներման եւ կամ յայլմէ առեալ զօրութիւն համարձակէի դնել: Եւ թէ որ համարեացի յանդուզն՝ համարեացի, միայն զօգտակարն ընտրիցէ եւ դատիցէ, եւ ես իսկ գամ զհետ՝ ոչ պարսաւելով, այլ շնորհ ունելով եւ գովելով:

ԳԼՈՒԽ ԾՂԱ ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳ ԽՕՍԵԱԼ ԿԱՆԱՆՑ

Եթէ ումեք խօսեալ է կին, նախ քան գմտանել աղջկանն յեկեղեցին չար գործքն յայտնեցան, իշխան է այրն թէ առնուլ թէ ոչ: Ապա թէ յեկեղեցի մտեալ իցէ, մի՛ իշխեսցէ արձակել, եւ թէ արձակեսցէ, այրի կոչեսցի եւ երեք ամ ապաշխարեսցէ: Եւ յայլում գլխի հրամայէ զխօսեալն թողուլ վասն պոռնկութեան, եւ աստ յաղագս յեկեղեցի մտանելոյն՝ ոչ: Սակայն եւ թէ որդիս ծնեալ է, իշխան է թողուլ վասն պոռնկութեան, այլ աստ յաղագս պատուելոյ զեկեղեցին ասէ: Ապա՝ ոչ է պսակ արտաքոյ եկեղեցոյ եղեալն: Եւ զի ոչ է ի տան առն, եւ առաջի կայ զգաստանալն, ապա թէ ի նոյն իցէ վարքն, իշխան է այնուհետեւ թողուլ:

ԳԼՈՒԽ ԾՂԲ ՎԱՍՆ ՏՂԱՅՈՑ ՊՍԱԿ ՈՉ ԴՆԵԼ

Տղայոց պսակ մի՛ իշխեսցէ որ դնել, մինչեւ ի չափ հասեալ՝ զհաճոյս իրեանց իմասցին, եւ թէ որ յանդգնի՝ լուծցի ի քահանայութենէն եւ հարիւր դրամ տուգան տացէ յեկեղեցին. եւ տղայն ի չափ հասեալ՝ ամուսնացի ընդ որ եւ կամեսցի: Եւ յայլում կանոնի ասէ՝ ոչ պսակեալ առանց զմիմեանս տեսանելոյ, զի անյայտ է, թէ բնաւին ոչ կամին ամուսնանալ եւ կամ ոչ հաւանիլ միմեանց, հրամայէ

չառնույ: Ապա թէ լիցի, եւ ի չափ հասեալ ոչ կամի, անվտանգ առնէ յաղագս ակամայ իրին: Հաւանելի լիցի այս դատաստան յեկեղեցի Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԾՂԳ ՎԱՍՆ ՈՐ ՉՄԻՆ ՄՕՐ ԿԵՐԵԱԼ ԻՅԵՆ

Հարցումն. Որ միոյ մօր կաթամբ սնեալ իցեն օտարք ի միսեանց, յորժամ ի չափ հասանիցեն, արժան է ամուսնանալ, թէ ոչ: Պատասխանի. Չէ արժան, քանզի ծնողն եւ ստնտուն ընդ մի համարեալ են:

ԳԼՈՒԽ ԾՂԳ ՎԱՍՆ ՓՈԽՈՂԱՅ ՉՄԱՀՄԱՆՍ

Հարցումն. Որ զսահմանս յափշտակէ զընկերին, ո՞րպիսի ինչ է: Պատասխանի. Չոր գրեաց Մովսէս յՕրէնս հրամանաւ Աստուծոյ՝ իջցէ անէծքն այն ի վերայ գլխոց նոցա, եւ եղիցի նզովեալ ի կեանս եւ ի մահ: Լուիցեն զայս յափշտակող սահմանաց եւ զարհուրեցին, զի դատաստան աստուածային է: Եւ թէ լիցի հակառակութիւն ինչ անդաստանաց, վկայիք լուծցի, զի զայն հաւաստի կարծես լինել, քան բառնալ խաչ եւ Աւետարան միոյ, զի բազում անգամ խաբէութիւն լինի, եւ զի երդումն է այդմ օրինակաւ, զոր ոչ հրամայեցաւ: Եւ թէ այդպէս կատարի բանդ դատաստանի, մի բարձող խաչին լիցի վկայ, եւ մի՝ երդումն, եւ եղեւ երկու ըստ Օրինացն: Այլ զայս ոչ հրաման տալով ասենք, որպէս յառաջդ իսկ գրեցաք վասն երդմանն, այլ յայտնել կամեցաք, թէ որ զայսպիսի առնէ՝ վճարեալ է իրք դատաստանին, որպէս ցուցաւ, թէ գերկու վկայի ունի գտեղի: Եւ թէ այսպէս լիցի, զապաշխարութիւնն լցցէ, որպէս ցուցեալ է յերդման ճատին:

ԳԼՈՒԽ ԾՂԵ ՎԱՍՆ ԿՆԱՀԱՆԱՅ

Եթէ որ թողցէ զկին՝ զորդոց մայր, առանց բանի պոռնկութեան, կամ կախարդութեան, կամ թէ արատ ինչ ի մարմին չիցէ, այլ թէ այրն շնաբարոյ իցէ եւ ակն եղեալ իցէ այլում, դատաստան այս լիցի. զորդիսն եւ զամենայն ինչ որ ունի բաժանեցեն հասարակաց: Եւ թէ կամք են կնոջն զայր ի տուն ածել յինքն, համարձակ ածցէ: Եւ զբաժինն կալցին եւ զարքունի հարկն ողջ արասցեն: Եւ այրն, որ եթող, եւթն ամ ապաշխարեցէ եւ յեկեղեցի տուգանս տացէ. թէ ազատ է՝ երեքհարիւր դրամ, եւ թէ շինական՝ գանալից լիցի եւ հարիւր դրամ տայ յեկեղեցին, փոխանակ զօրհնութեամբ զամուսնութիւնն խտտելոյ: Ապա թէ

մինչդեռ ի պայքարին եւ ի տուգանին իցեն, եւ կին որ յանդգնեալ կնաթողին լիցի կին, եւ ամ մի շիցէ անցեալ, յայտ եղեւ, թէ գառաջին կինն նա ետ թողուլ, կալցեն զկինն եւ յօրկանոց տացեն, եւ գտարի մի աղասցէ գողեացն. թէ ազատ է եւ յօրկանոց չերթայ՝ հարիւր դրամ տուգանք տայ գողեացն: Մի անգամ եւ երկիցս գայս եղաք դատաստան. դարձեալ եւ այժմ, զի գանձն յընդդիմադրութենէ կանոնաց կարծեաց ազատիցեն եւ գյաւելուած իւրաքանչիւր հրամանացն դիցեն, ըստ որում եւ յայսմ կանոնի հանդերձ այլօք: Եւ գայրն ի տանէ մերժել եւ այլ ի ներքս ածել հրամայէ, որ է առաւելութիւն սաստի:

ԳԼՈՒԽ ԾՂԶ ՎԱՍՆ ԱՄՈՒԼ ԿԱՆԱՆՑ

Եթէ որ արար կին եւ պատահեցաւ ամուլ, եւ այրն հանցէ վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տունն՝ թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, իշխան է առնուլ եւ գնալ: Եւ թէ քան զամլութիւնն այլ արատ չգուցէ ի կինն, տուգան եւս տացէ կնոջն վասն անարգանացն. թէ ազատ է՝ հազար եւ երկուհարիւր դրամ, թէ շինական է՝ վեցհարիւր դրամ: Ապա թէ մինչդեռ ի դատաստանին եւ ի տուգանին իցեն, եւ ամ մի ի վերայ շիցէ անցեալ, եւ որ ի կանանց յանդգնի եւ առնն կին լիցի, կալցեն զկինն եւ յօրկանոց տացեն, քանզի յայտ եղեւ, թէ հանելոյ կնոջն պատճառ նա եղեւ, եւ տարի մի աղասցէ գողեացն, եւ յաղախութեան կացցէ, եւ եկեղեցի հարիւր դրամ տուգանք կալցեն, փոխանակ զի բուն ամուսնութիւնն վասն նորա խոտեցաւ. ապա թէ ազատ է եւ չերթայ ի գողենոց, հարիւր դրամ տուգանք տացէ գողեացն: Ապա թէ յառաջագոյն խորհուրդ եղեալ էր առն, թէ՛ զինն թողում եւ զքեզ առնում, եւ կամ պոռնկութեամբ խաժական լեալ իցէ, հարիւր դրամ այրն տուգան տացէ յեկեղեցին եւ ապաշխարութեամբ երեք ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ մին ամ՝ ընդ ձեռամբ եւ ապա մտցէ յեկեղեցի: Եւ որ գորդոց մայր թողցէ առանց պոռնկութեան կամ այլ արատոյ, առն եւ կնոջ պատուհաս տուգան եւ ապաշխարութիւն ի կանոնացդ կացցէ: Եւ որքան կար եղեւ՝ ի դէպ գդատաստան այսմ եղաք եւ մեք, եւ գորս ի կանոնսն՝ եւ գայնս եւս դրոշմեցաք, զի գիրաքանչիւրոցն զարժանն դիւրին լիցի դատաւորաց տալ զվճիռն ուղղապէս: Եւ զի մեք չափաւորապէս գդատաստանն եղաք յիւրաքանչիւրսն եւ զապաշխարութիւնն ի կանոնսն թողաք: Եւ գայս այժմ ծանուցաք, զի գիտացես, թէ յամենայն դատաստանս, ուր ապաշխարութեան պէտք են, ի կանոնսն ապաստան թողաք:

ԳԼՈՒԽ ԾՂԷ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ, ՈՐ ԹՈՂՈՒՆ ՋԱՅՐՍ

Եթե կին որ յառնէ ելանէ, կալցեն եւ անդրէն տացեն յայր իւր, եւ մանաւանդ գոր վարձանօք իցէ վարձեալ եւ ոչ բոզաբար, թէպէտ վաճառիցէ, թէպէտ յաղախնութեան կալցէ, թէ կամք իցէ՝ հոգետր եւ բարի խրատու եւ սիրով կալցի: Ապա թէ այրն չարաբարոյ իցէ, կամ պոռնիկ, կամ հանգանակող եւ արբեցող, կամ այլ ինչ խեղական, գանիւ եւ խրատու կշտամբեցեն գայրն եւ հնազանդեցուցեն զերկոսեանն. ապա թէ ազատ է, տուգանօք եւ խրատիւ գայրն ի կարգ ածեն: Ապա թէ ի բարի շրջի այրն, կինն ծառայեցէ նմա: Եթէ որպիսի պատճառաւ ելցէ կինն յառնէն եւ թէ չելցէ, եւ այդ նշանակեալ է մեր զիջմամբ յաղագս երկիւղի մեծագին վնասու: Նաեւ կանոնական հրամանաւ յօժարեցաք եւ գայս այժմ գորբոց դնել զբան, զի զանգզամ կինն խրատել հրամայէ, նոյնպէս եւ՝ գայրն: Եւ զի յայտ արասցուք, թէ կամք մեր ոչ զհակառակն կամի կանոնաց, այլ թէ կամք լիցի դատաւորաց այլոց առնուլ ինչ ի մերոնցն՝ առցէ, ապա թէ ոչ՝ կանոնքն հաստատուն կացցէ:

ԳԼՈՒԽ ԾՂԸ ՎԱՍՆ ՈՐ ԱՌՈՒԳՆԱՅՔ ԱՌՆԷ

Որ առեւանգս առնեն, կալցեն զկինն եւ անդրէն ի ծնողքն տացեն, եւ տուգանք տացեն փոխանակ անարգանացն. թէ ազատ է՝ հազար եւ երկերիւր դրամ, թէ շինական է՝ վեցհարիւր դրամ: Եւ որք հրոս երթեալ իցեն եւ օգնականք սուտ փեսային, առ այրն հարիւր դրամ տուգանք տացեն. եւ գայս տուգանս զկէսն յեկեղեցին տացեն եւ զկէսն՝ կարօտելոց: Ապա թէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակ դնելոյ, յեկեղեցի տուգանք առցեն ի նմանէ, զի զպսակն օրհնութեան ընկեաց, եւ երեք ամ յապաշխարութեան կացցէ: Ապա թէ երէց գաղտ պսակ իցէ եղեալ առանց հօր եւ մօր աղջկանն, երէցն զքահանայութիւն շիշխէ պաշտել եւ հարիւր դրամ տուգանք տացէ, եւ կարօտելոց բաշխեցեն, եւ պսակն, գոր եղ, անվաւեր լիցի: Ապա թէ յետ այսր խոտվութեան եւ տուգանաց դարձեալ ի հաւանութիւն զան կամօք աղջկանն եւ ծնողացն, եւ յառաջ պոռնկեալ են, պսակ մի՛ օրհնեցի, այլ իբրեւ երկակին՝ ուր տեառնագրեալ դիցեն ի գլուխ նոցա. ապա թէ կուսանք կացեալ են, ըստ օրհնին օրհնեցի: Թէ ազատ է, թէ շինական՝ կանոնք այդ կացցէ: Թէպէտ եւ այս եղեալ է դատաստան ըստ զանազանութեան, այլ աստ յոյժ լիով կարգեցաւ, վասն որոյ

յօժարեցաք զայս եւս գրել, զի անտարակոյս լիցի դատաւորաց այդոցիկ պատահումն, եւ զտուգանսն ըստ ժամանակի եւ ըստ կարի համեմատելով արասցեն: Եւ ուսցին այժմու եպիսկոպոսունք, զի տուգանք պոռնկի յաղքատս հրամայի: Եւ այդոցիկ եւ այլոց զանագանութիւն է, զոր ինքեանց այժմ առնուն դատաւորք, որք են եպիսկոպոսք, յորոց զարհուրիլ եւ խորշիլ պարտ է, զի յաղագս քաւելոյ գյանցանս լինի, եւ մնան այժմ անքաւելի:

ԳԼՈՒԽ ԾՂԹ ՎԱՍՆ ԱԻԱԳ ԵՐԻՅԱՆՑ

Քահանայք գահասիրութեամբ մի՛ հակառակեցին ընդ միմեանս, զի զոր շնորհն Աստուծոյ ընտրեաց նախ ի քահանայութիւն՝ նա է նախագահ յեկեղեցոջ: Եւ զայս ասէ՛ որք կամին զառաջին պատիւն: Եւ ուղիղ դատաստանաս է, որ առաջին օծաւ՝ առաջին լինել, եթէ իցէ յառաջադէմ, ասպա թէ շիցէ՛ զոր ընտրեալ են այլք, կամօք եպիսկոպոսին առաջին կացուցեն, որպէս զի բարեգարդութեամբ լցցէ զեկեղեցին, մանաւանդ թէ հիւրասիրութեամբ վկայեալ իցէ:

ԳԼՈՒԽ Մ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՄՏԻՑ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Եւ ժողովրդական որք մի՛ հրապուրեցին ի նոցանէ ի բաժանումի սրբոյ եկեղեցոյ, զի պատճառ խռովութեանն բերէ, այլ զպտուղս եւ զմուտս ժողովրդականքն միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուցեն ամենայն յօժարութեամբ անխափան եւ մի՛ ըստ դասուց բաժին արասցեն եւ երդոց, որ եղել վնաս: Եւ քահանայից առեալ ի սրբոյ եկեղեցոյն՝ բաժանեցեն կարգաւորաբար, որպէս եւ օրէնն է. զլիսաւոր քահանայիցն՝ երկու մասն եւ կէս, եւ այլ քահանայիցն՝ երկու մասունս, եւ սարկաւագունքն՝ մին մին մասն, դպիրքն՝ կէս կէս մասն, եւ այրի կանայքն, թէ իցեն պարկեշտք՝ մին մասն, առանց ամենայն հակառակութեան: Ապա թէ իցէ որք, որ հակառակեցի եւ առնիցէ խռովութիւն, այնպիսին դատապարտեալ լիցի յիւր կարգէն, եւ ընկերքն իւր մի՛ իշխեսցեն ընդ այնպիսին հաղորդիլ, եւ ոչ ժողովրդականքն առ քահանայս ունել գնուս: